

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1111-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը վերակազմավորվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 18-ի N 1162-Ն որոշմամբ դադարեցվել է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գործունեությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 31-ի N 350-Ն որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության համակարգում գործող «Ալեքսանդր Թամանյանի թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը միացման ձևով վերակազմակերպվել է՝ միացվելով «Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, որի արդյունքում «Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանվել է «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության:

2016 թվականի ընթացքում քաղաքաշինության համակարգում կատարված օպտիմալացման արդյունքում ընդհանուր 277 հաստիքային միավորից կրճատվել է 72 հաստիքային միավոր (26 %):

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, 2016 թվականի ընթացքում իր գործունեությունն իրականացրել է առաջնորդվելով բնագավառի հեռանկարային զարգացման ծրագրերով, ՀՀ Նախագահի կարգադրություններով և հրամանագրերով, ՀՀ կառավարության որոշումներով, ՀՀ 2016 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերով և դրանցից բխող կոմիտեի 2016 թվականի աշխատանքային ծրագրով ամրագրված հիմնախնդիրներով:

Ստորև ներկայացվում է ՀՀ կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի N 131-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման, ինչպես նաև սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերից բխող և ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի N 131-Ն ՈՐՈՇՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1. ՀՀ կառավարության 2016 թվականի գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների՝

1.1 48-րդ կետ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծն ընդունվել է ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 16-ի N630-Ն որոշմամբ:

1.2 49-րդ կետ՝ «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի

հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը:

«Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծն ընդունվել է ՀՀ կառավարության 2016 թվականի ապրիլի 6-ի N356-Ն որոշմամբ:

1.3 50-րդ կետ՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N997-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N997-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագիծն ընդունվել է ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի N855-Ն որոշմամբ:

1.4 51-րդ կետ՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N728-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N792-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N728-Ն որոշման մեջ փոփոխություններ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N792-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը 2016 թվականի նոյեմբերի 8-ի N01/15.2/5920-16 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:

ՀՀ վարչապետի 2016 թվականի դեկտեմբերի 19-ի N02/24.8/21390-16 հանձնարարականի համաձայն նախագիծը՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N01/11.1/7029-16 գրությամբ, լրացուցիչ ներկայացվել է ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ Տավուշի մարզպետարանի և Երևանի քաղաքապետարանի քննարկմանը:

1.5 52-րդ կետ՝ «Հայաստանի Հանրապետությունում շենքերի սեյսմակայունության բարձրացման նպատակային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը:

«Հայաստանի Հանրապետությունում շենքերի սեյսմակայունության բարձրացման նպատակային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը 2016 թվականի նոյեմբերի 24-ի N01/12.1/6191-16 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:

ՀՀ վարչապետի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N02/24.8/21757-16 հանձնարարականի համաձայն որոշման նախագիծը՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 28-ի N01/14.2/6991-16 գրությամբ, լրացուցիչ ուղարկվել է ՀՀ Ֆինանսների նախարարության քննարկմանը:

1.6 53-րդ կետ՝ Հայաստանի Հանրապետությունում կիսակառույցների շինարարության ավարտման և հետագա օգտագործման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը:

«Հայաստանի Հանրապետությունում կիսակառույցների շինարարության ավարտման և հետագա օգտագործման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծի մշակման և պետական կառավարման մարմինների հետ համաձայնեցման ընթացքում պարզվել է, որ մի շարք համայնքներում և ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հաշվեկշռում գտնվող որոշ կիսակառույցներ մասնավորեցվել են և անհրաժեշտություն է առաջացել մեկ անգամ ևս ճշտել կիսակառույցների ցանկերն ու անհրաժեշտ հաշվարկները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ միջոցառումն ընդգրկվել է «ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» ՀՀ

կառավարության որոշման նախագծում և միջոցառման կատարման ժամկետ է նախանշվել 2017 թվականի փետրվարի 2-րդ տասնօրյակը:

III. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի N 131-Ն ՈՐՈՇՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐ

1. ՀՀ կառավարության 2016 թվականի գերակա խնդիրների՝

1.1 23-րդ կետ՝ «Քաղաքաշինության ոլորտում ներդրումային միջավայրի գրավչության խթանում, կառուցապատման ընթացակարգերի պարզեցում» գերակա խնդիրը:

Գերակա խնդրի լուծման նպատակաուղղված քայլերը ներառվել են ՀՀ կառավարության 2016 թվականի միջոցառումների ծրագրի 48-րդ կետի շրջանակներում մշակված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծում, որը հաստատվել է ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 16-ի N 630-Ն որոշմամբ:

Մինևույն ժամանակ, մշակվել և ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կայքում տեղադրվել է հանրապետությունում կառուցապատման գործընթացներն իրականացնելու համար անհրաժեշտ թույլտվությունների տրամադրման հաջորդական քայլերը (ըստ շինարարական օբյեկտի ռիսկայնության աստիճանի/կատեգորիայի, այդ թվում՝ էլեկտրոնային քաղաքաշինական թույլտվությունների տրամադրման համակարգի կիրառմամբ) նկարագրող «Կառուցապատողի ուղեցույցը»:

1.2 24-րդ կետ՝ Հայաստանի Հանրապետության համայնքներում քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի համակարգի համալրում՝ դրանց մշակման և հաստատման գործառույթների օպտիմալացման ու պարզեցման նոր լծակների ամրագրման միջոցով գերակա խնդիրը:

Հանրապետության համայնքներում քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի համակարգի համալրումն ապահովելու նպատակով մշակվել և 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 01/11/6587-16 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման ծրագրին և իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:

Ծրագիրը նպատակաուղղված է ՀՀ համայնքներում քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի լիարժեք բազայի ձևավորմանը՝ դրանց մշակման և հաստատման գործառույթների պարզեցման, հստակեցման, բնակավայրերի անվտանգ և բնականոն զարգացումն ապահովող մեխանիզմների միջոցով:

2017 թվականին նախատեսվում է ՀՀ համայնքների տարածական պլանավորման փաստաթղթերի համակարգը համալրել ՀՀ Տավուշի մարզի 6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերով (որոնք կներառեն 55 բնակավայրի գոտևորման նախագծեր), որոնց մշակման համար ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 140.0 մլն. դրամ:

1.3 25-րդ կետ՝ «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման աշխատանքների համակարգում, այդ թվում՝

- տարածքների կառուցապատման հայեցակարգերի և ներդրումային փաթեթների մշակում (ներառյալ՝ ծավալատարածական և գործառույթային համալիր լուծումները),

- ներդրողների հետ բանակցային գործընթացի համակարգում» գերակա խնդիրը:

- Տարածքների կառուցապատման հայեցակարգերի և ներդրումային փաթեթների իրականացման շրջանակում մշակվել է՝ Երևան քաղաքի 33-րդ թաղամասի (ներկայիս Ֆիրդուսի շուկայի տարածք) կառուցապատման ներդրումային փաթեթի եռալեզու տարբերակը:

2016 թվականի աշնանը Նյու Յորքում նախատեսված «Հայաստան ներդրումային համաժողովում» ներկայացման նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն է ներկայացվել վերոհիշյալ թաղամասի ներդրումային փաթեթի թարմացված տարբերակը:

Միաժամանակ մշակվել են՝ Երևան քաղաքում «Նոյ» ազգագրական թաղամասի, «Պրեմիում Պլազա» առևտրի կենտրոնի և «Art Hotel» հյուրանոցային համալիրի ներդրումային փաթեթները:

- Ներդրողների հետ բանակցային գործընթացի համակարգման նպատակով կազմակերպվել են մի շարք հանդիպումներ օտարերկյա և հայ ներդրողների հետ, որի շնորհիվ ձեռք են բերվել

հստակ պայմանավորվածություններ 33-րդ թաղամասի որոշ հողատարածքների (լոտերի) վերաբերյալ: Ներկայումս թաղամասի ընդհանուր հողատարածքի 40% մակերեսի համար իրականացվում են նախագծային աշխատանքներ:

1.4 26-րդ կետ՝ «Շինարարական աշխատանքների արժեքի գնագոյացման նոր մեթոդաբանության մշակում» գերակա խնդիրը:

Շինարարական աշխատանքների արժեքի ներկայումս գործող կարգի վերանայման, գնագոյացման նոր մեթոդաբանության մշակման խնդիրների շուրջ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեում 2016 թվականին կազմակերպվել են մի շարք մասնագիտական քննարկումներ:

Հաշվի առնելով քննարկումների ժամանակ ոլորտի մասնագետների տարակարծությունները, մոտեցումների տարբերությունը, հիմնավորումների դրական և թերի կողմերը՝ նախատեսվել էր աշխատանքների իրականացման համար մրցութային կարգով ստեղծել աշխատանքային խումբ՝ 8-10 մասնագետի ներգրավմամբ (որի համար անհրաժեշտ էր մոտ 30.0 մլն. ՀՀ դրամ), իսկ աշխատանքներն իրականացնել 10-12 ամսվա ընթացքում:

Սակայն, հաշվի առնելով, որ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեում գնագոյացման նոր մեթոդաբանության մշակման աշխատանքների համար միջոցներ չեն հատկացվել, նախատեսվել է նոր մեթոդաբանության մշակման փոխարեն արդիականացնել գնագոյացման բաղադրիչները:

Այդ կապակցությամբ «Քաղաքաշինության ոլորտում պետական և համայնքային բյուջեների հաշվին իրականացվող շինարարական աշխատանքների գնագոյացման սկզբունքները ձևավորող բաղադրիչների արդիականացում» աշխատանքը ներառվել է «ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծում և միջոցառման կատարման ժամկետ է նախանշվել 2017 թվականի ապրիլի 1-ին տասնօրյակը:

Նշված աշխատանքը ՀՀ կառավարության 2017 թվականի գերակա խնդիրների ցանկում ներառելը բխում է նաև ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N1060-Ա որոշմամբ հաստատված ծրագրի «Քաղաքաշինություն» բաժնի 4-րդ պարբերության «ա» ենթակետի դրույթից:

Միաժամանակ, աշխատանքը ներառված է նաև ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի կողմից 2016 թվականի նոյեմբերի 22-ին հաստատված՝ քաղաքաշինության ոլորտում առկա հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների ծրագիր-ժամանակացույցում (կետ 3):

Շինարարության գնագոյացման բաղադրիչների հաշվարկման արդիականացման արդյունքում կփոխվի նաև գործող գներով շինարարական աշխատանքների հաշվարկման ներկայումս կիրառվող կարգը:

IV. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ, ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՎ ԵՎ ՏԱՐԲԵՐ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐՈՎ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ

1. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

1.1 Քաղաքաշինական ընթացակարգերի պարզեցում.

1.1.1 Կառուցապատման գործընթացի հստակեցման և պարզեցմանն ուղղված միջոցառումների շրջանակներում ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 18-ի N 912-Ն և 2016 թվականի հունիսի 16-ի N 630-Ն որոշումներով համապատասխան փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման մեջ:

Մասնավորապես՝ «Քաղաքաշինության մասին» և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքներում կատարված փոփոխություններից ելնելով՝ պարզեցվել է միջին ռիսկայնության (II կատեգորիա) օբյեկտների ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողովի կազմավորման և գործելու հետ կապված ընթացակարգը, կանոնակարգվել է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով սահմանված քաղաքաշինական համալիր փորձաքննության իրականացման գործընթացը, ինչպես նաև ներառվել են էլեկտրոնային ծանուցման միջոցով շինարարության իրականացման վարչարարական ընթացակարգերի կրճատմանն ուղղված դրույթներ:

Ոչ ձեռնարկատիրական նպատակով կառուցվող միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիա) դասակարգում ունեցող օբյեկտների դեպքում՝ դրանց համապատասխանությունը

նախագծային փաստաթղթերին ապահովվելու է հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության գրավոր երաշխավորագրով, իսկ ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողովի կազմում չի ներգրավվելու քաղաքաշինական պետական տեսչության ներկայացուցիչը:

1.1.2 «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10.1-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված պահանջների համաձայն՝ մշակվել և շահագրգիռ մարմինների քննարկմանն է ներկայացվել «Պետական համալիր փորձաքննություն իրականացնելու նպատակով փորձաքննական հանձնաժողով ստեղծելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը: Նախագծի մշակումն ուղղված է օրենսդրությամբ սահմանված բարձր և բարձրագույն ռիսկայնության աստիճան (կատեգորիա) ունեցող օբյեկտների ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակման բարձր որակի ապահովմանը, ըստ այդմ՝ քաղաքաշինական օբյեկտների անվտանգության և կայունության երաշխավորման ու կառուցապատման գործառույթների մասնագիտական և լիարժեք հիմնավորվածությանը:

1.1.3 ՀՀ վարչապետի 2015 թվականի հոկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան քաղաքային համայնքի և հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1019-Ա որոշման հավելվածի 5-րդ կետին համապատասխան ՀՀ կառավարություն է ներկայացվել «ՄոնԱրխ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պատվերով Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի կողմից մշակված «Հայկական տուն» նախագծերի կատալոգի էլեկտրոնային տարբերակը: Կատալոգը ներառում է Հայաստանի տարբեր տարածաշրջանների, այդ թվում՝ Դիլիջանի տարածաշրջանին բնորոշ ժողովրդական բնակելի տների օրինակելի նախագծեր:

1.2 Քաղաքաշինական գործունեության սուբյեկտների իրազեկվածության բարձրացում.

ՀՀ կառավարության 2016 թվականի գերակա խնդիրների ցանկի 23-րդ կետի համաձայն և Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2016 թվականի միջոցառումների ծրագրի շրջանակներում՝ մշակվել և նախարարության ինտերնետային կայքում է տեղադրվել հանրապետությունում կառուցապատման գործընթացներն իրականացնելու համար անհրաժեշտ թույլտվությունների տրամադրման հաջորդական քայլերը (ըստ շինարարական օբյեկտի ռիսկայնության աստիճանի/կատեգորիայի, այդ թվում՝ էլեկտրոնային քաղաքաշինական թույլտվությունների տրամադրման համակարգի կիրառմամբ) նկարագրող «Կառուցապատողի ուղեցույցը», որը 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 01/15.1/6816-16 գրությամբ ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով պաշտոնական թարգմանության: Նշված մոտեցումը հնարավորություն կստեղծի կառուցապատման գործընթացի իրականացման ընթացակարգերում՝ քաղաքաշինության բնագավառում բարեփոխումների իրականացման ծրագրի շրջանակներում կատարվող փոփոխությունները ժամանակին ներառել «Կառուցապատողի ուղեցույցում»:

1.3 Քաղաքաշինական գործունեության հարուկ կարգավորման օբյեկտներ.

ՀՀ կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի N 131-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 51-րդ կետով սահմանված միջոցառման կատարումն ապահովելու նպատակով՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 728-Ն որոշման մեջ փոփոխություններ և ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 792-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

1.4 Հայաստանի Հանրապետությունում տարածքային (ռեգիոնալ մակարդակի) և համակցված (միկրոռեգիոնալ մակարդակի) տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման գործընթացի կանոնակարգում.

1.4.1 Հանրապետության համայնքներում քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի համակարգի համալրումն ապահովելու նպատակով մշակվել և 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 01/11/6587-16 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման ծրագրին և իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը: Ծրագիրը նպատակաուղղված է ՀՀ համայնքներում քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի լիարժեք բազայի ձևավորմանը՝ դրանց մշակման և հաստատման գործառույթների պարզեցման, հստակեցման, բնակավայրերի անվտանգ և բնականոն զարգացումն ապահովող մեխանիզմների միջոցով: 2017 թվականին նախատեսվում է ՀՀ համայնքների տարածական պլանավորման փաստաթղթերի համակարգը համալրել ՀՀ Տավուշի մարզի 6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերով (որոնք կներառեն 55 բնակավայրի գոտևորման նախագծեր), որոնց մշակման համար ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 140.0 մլն. դրամ:

1.4.2 Մշակվել և ընդունվել է ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 997-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 855-Ն որոշումը:

1.4.3 ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացություններ են տրվել ՀՀ 11 համայնքների գլխավոր հատակագծերին և Երևանի 1 վարչական շրջանի գոտևորման նախագծին (Ավան):

1.4.4 Դրական եզրակացություններ են տրվել 3 համայնքի գլխավոր հատակագծերի մշակման առաջադրանքների նախագծերին:

1.4.5 Համայնքների և Երևան քաղաքի գլխավոր հատակագծերի փոփոխության առաջարկությունների վերաբերյալ տրվել են 104 դրական եզրակացություն:

1.5 Հայաստանի Հանրապետությունում Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայի իրագործման ուղղությամբ գործողություններ

2016 թվականի հոկտեմբերի 5-ից 7-ը Երևանում կազմակերպվել է Եվրոպայի խորհրդի «Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայի իրագործման ազգային քաղաքականություններ. մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով 18-րդ միջազգային համաժողովը՝ Եվրոպայի խորհրդի 25 անդամ-պետությունների 62 ներկայացուցիչի և ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, մասնագիտական հանրության, գիտական և ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Համաժողովի հիմնական նպատակն էր՝ Եվրոպայի խորհրդի անդամ-պետություններում լանդշաֆտների ազգային քաղաքականությունների ուսումնասիրությունը, լանդշաֆտային և տարածական պլանավորման փոխհամաձայնեցված մեթոդների, գործիքակազմի ու խթանների վերլուծությունը, հիմնական մարտահրավերների և առկա հիմնախնդիրների բացահայտումը՝ Եվրոպական համագործակցության համատեքստում, ինչպես նաև Կոնվենցիայի իրագործմանը նպատակաուղղված նոր հայեցակարգերի և ձեռքբերումների հետ կապված փորձի փոխանակումը:

2. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ-ԿՈՄՈՒՆԱԼ ՈԼՈՐՏ

2.1 ՀՀ կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների 49-րդ կետի համաձայն մշակվել և ընդունվել է ՀՀ կառավարության 2016 թվականի ապրիլի 6-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության միջոցառումները հաստատելու մասին» N356-Ն որոշումը:

2.2 Շարունակվել է երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված պետական աջակցության ծրագրի իրականացումը, որի շրջանակներում՝

- ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված 1 մլրդ 849 մլն. 525.0 հազ. դրամի շրջանակներում 2016 թվականին լուծվել է երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած 287 ընտանիքի բնակարանային խնդիր, որոնցից 187-ը՝ ՀՀ կառավարության 2016 թվականի ապրիլի 6-ի N 356-Ն որոշման համաձայն, ֆինանսական աջակցության (ԲԳՎ-ի միջոցով կամ ուղղակի) տրամադրմամբ, իսկ 100 ընտանիք՝ Ախուրյան համայնքում կառուցված 3 բազմաբնակարան շենքերից բնակարանների հատկացմամբ (ընդ որում, այդ շենքերից մեկի շինարարությունը՝ փորձնական ծրագրի շրջանակներում, իրականացվել է էներգաարդյունավետ միջոցառումների կիրառմամբ),

- իրականացվել է Գյումրի և Սպիտակ քաղաքներում 2010 ու 2012 թվականներին հատկացված բնակարանների (բնակելի տների) նվիրատվության պայմանագրերի կնքման գործընթացը,

- Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները և հետագա անելիքները ներկայացվել են 2016 թվականի դեկտեմբերի 7-ին. կայացած ասուլիսի, ինչպես նաև հեռուստա և ռադիո հաղորդումների ժամանակ:

2.3 Նախապատրաստվել են ՄԱԿ ԵՏՀ-ի և ՄԱԿ-Հարիթաթի աջակցությամբ մշակվող՝ Երկրի Նկարագրի հետ կապված նյութերը և ՄԱԿ ԵՏՀ-ի բնակարանային և հողերի կառավարման կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 13-ից 16-ը կայացած 77-րդ նստաշրջանում հաստատվել է Հայաստանի Երկրի նկարագիրը՝ քաղաքների պլանավորման և զարգացման, հողերի կառավարման, բնակարանային քաղաքականության, շենքերում էներգաարդյունավետության բարձրացման ու էներգախնայողության ոլորտներում օրենսդրական, ինստիտուցիոնալ շրջանակների և ֆինանսավորման մեխանիզմների վերաբերյալ:

2.4 Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի (տանիք, նկուղ) վերակառուցման (նորոգման) պետական աջակցության համակարգված մեխանիզմների ներդրման նպատակով մշակվել է համապատասխան հայեցակարգի նախագիծ, ինչպես նաև մասնակցություն է ցուցաբերվել ՀՀ արդարադատության նախարարության համակարգման ներքո իրականացվող՝ «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման աշխատանքներին:

2.5 Պատրաստվել են թվով 34 հաշվետվություններ ու վերլուծություններ, միջգերատեսչական հաստատությունների կողմից ներկայացված՝ թվով 38 իրավական ակտերի և ծրագրային փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ ներկայացվել են առաջարկություններ:

2.6 Աղետի գոտու, բազմաբնակարան շենքերի կառավարման, վթարային բնակֆոնդի, տնակային ավանների վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների, փաստաբանների, հասարակական կազմակերպությունների, և այլոց կողմից բարձրացված հարցերի, ինչպես նաև քաղաքացիների դիմում-բողոքների հետ կապված տրվել են ավելի քան 500 պարզաբանումներ:

3. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՃԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏ

3.1 ՀՀ 2016 թվականի բյուջետային գործընթացի շրջանակում իրականացվել են թվով 31 կրթական, 6 մարզական, 11 մշակութային, 1 առողջապահական, 6 վարչական և 2 բնակարանային օբյեկտների նախագծային, շինարարական աշխատանքները, ինչպես նաև տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունները: Միաժամանակ մշակվել և սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ 2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագիրը՝ ըստ հաստատված ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակի, որի հիման վրա մշակվել է ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի հայտը:

3.2 Կատարվել են շինարարական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության, տեխնիկական վիճակի ուսումնասիրության, շինարարական աշխատանքների, հեղինակային և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումներն, այդ թվում՝

- Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման, փորձաքննության աշխատանքներ՝ 84 376 266 ՀՀ դրամ, որից 10 300 000 ՀՀ դրամը 2015 թվականի կանխավճարի մարում:

- Օբյեկտների տեխնիկական վիճակի ուսումնասիրության և մասնագիտական եզրակացության ձեռքբերման ծառայություններ՝ 745 160 ՀՀ դրամ:

- Շինարարական աշխատանքների ձեռքբերման ընդհանուր արժեքը կազմել է՝ 1 919 406 836 ՀՀ դրամ, որից 398 506 957 ՀՀ դրամը 2015 թվականի կանխավճարի մարում:

- Շինարարական աշխատանքների որակի տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայություններ՝ 57 056 602 ՀՀ դրամ, որից 13 496 660 ՀՀ դրամը 2015 թվականի կանխավճարի մարում:

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 20-րդ կետի 1-ին ենթակետի՝ տվյալ ոլորտում պետական քաղաքականությունն իրագործող լիազորված մարմինների կողմից ներկայացված հայտերի համաձայն կատարվել են նաև շինարարական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության, հեղինակային և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումները:

Իրականացվել է պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագիրը:

Ծրագիրն իրագործվում է փուլային սկզբունքով՝ 2014 թվականից՝ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ադոնց փողոցի N 6/1 և 2016 թվականից Ադոնց փողոցի N 6/2 հասցեներում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրների շինարարական աշխատանքների մեկնարկով:

Ադոնց փողոցի N 6/1 հասցեում ընդհանուր թվով 266 (I փուլ՝ 105, II փուլ՝ 135 և III փուլ՝ 26) բնակարանների բաշխումն իրականացվել է վիճակահանության երեք փուլերի իրագործմամբ, պայմանագրային արժեքը՝ 7,062,887.861 հազ.դրամ, Կապալառուին վճարված գումարը՝ 7048102.082 հազ.դրամ, վճարման ենթակա մնացորդ՝ 14,785.779 հազ.դրամ:

Ադոնց փողոցի N 6/2 հասցեում ընդհանուր թվով 175 բնակարանների բաշխումն իրականացվել է վիճակահանության մեկ փուլով, պայմանագրային արժեքը՝ 4,707,895.605 հազ.դրամ, Կապալառուին վճարված գումարը՝ 2,324,120.752 հազ.դրամ, վճարման ենթակա մնացորդ՝ 2,383,774.852 հազ.դրամ:

Ադոնց փողոցի N 6/1 և 6/2 հասցեներում կառուցվող ամբողջապես հարդարված բազմաբնակարան համալիրների ավարտը նախատեսվում է հաջորդաբար՝ 2017-2018 թվականներին:

3.3 ՀՀ Նախագահի 2008 թվականի հուլիսի 30-ի թիվ 128-Ա կարգադրությամբ հաստատված Ժամանակացույցի և 2012 թվականի ապրիլի 7-ից մայիսի 3-ը և 2013 թվականի հունվարի 21-ից փետրվարի 16-ը ՀՀ մարզերի տարբեր համայնքներ կատարած այցերի ընթացքում արձարծված առաջնահերթ խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների համաձայն՝ հավաքագրվել են տեղեկատվություններ, մշակվել, ամփոփվել և ներկայացվել են ՀՀ կառավարության, ՀՀ նախագահի աշխատակազմ և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն: Ընդ որում ավարտվել են թվով 3 կրթական օբյեկտների շինարարական աշխատանքները և 1 կրթական օբյեկտի նախագծային աշխատանքները: Հանձնման - ընդունման փուլում են գտնվում թվով 2 մազական և թվով 1 մշակութային օբյեկտների շինարարական աշխատանքները: Նախատեսվում է 2017 թվականին իրականացնել 3 կրթական օբյեկտների նախագծային աշխատանքները, իսկ թվով 11 օբյեկտի շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել հետագա տարիներին:

3.4 ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի նիստի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2016 թվականի տարեկան ծրագրին և միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» N 44 արձանագրային որոշման N 1 հավելվածի 2.1 կետի և ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի նիստի «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց համար 2016 թվականը հավասար հնարավորությունների տարի հայտարարելու և հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարի հայտարարելու կապակցությամբ անցկացվող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» N 40 արձանագրային որոշման հավելվածի 3.4 կետի շրջանակներում տեղեկատվություն է ներկայացվել 2016 թվականին ՀՀ կառավարությանն առըթեր քաղաքաշինության պետական կոմիտեի պատվիրատվությամբ հանրապետության թվով 8 ուսումնական հաստատություններում թեքահարթակների, հարմարեցված սանհանգույցների կառուցման և Կառավարական 3-րդ շենքում հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժն ապահովելու նպատակով իրականացված շինարարական աշխատանքների վերաբերյալ:

3.5 ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հուլիսի 24-ի N 294 որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 308-Ն որոշման 1-ին կետի «ը» ենթակետի շինարարության ոլորտում՝ պետական պատվերի, ինչպես նաև օտարերկրյա պետությունների ու միջազգային կազմակերպությունների աջակցությամբ

իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացված շինարարական աշխատանքների ծավալների մասին եռամսյակային պարբերականությամբ տեղեկատվություն է տրամադրվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին:

3.6 Լրամշակվել և ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Շինարարության ոլորտի բարեփոխումների ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որը Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի ապրիլի 28-ի նիստի N 16 արձանագրության 29-րդ կետով հավանության է արժանացել:

3.7 Մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել «Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում (տեղայնացում) ծրագրին հավանություն տալու մասին» և «Հայաստանի Հանրապետությունում շենքերի տեխնիկական վիճակի հետազննություններ և անձնագրավորում ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծերը:

3.8 ԵՏՄ անդամակցության շրջանակներում քննարկվել և կարծիքներ են ներկայացվել մի շարք փաստաթղթերի, այդ թվում՝ «Շենքերի և շինությունների, շինարարական նյութերի և արտադրատեսակների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի նախագծի մշակման աշխատանքները շարունակելու նպատակով տեխնիկական կանոնակարգման, սանիտարական, անասնաբուժական և ֆիտոսանիտարական միջոցների կիրառման Խորհրդովական կոմիտեին կից շինարարությունում տեխնիկական կանոնակարգման հարցերով ենթակոմիտեի 2016 թվականի նոյեմբերի 28-ին կայացած հերթական խորհրդակցության N 1-ՅԿ/ՄՔ արձանագրության 4.6-րդ կետի վերաբերյալ՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում պարտադիր հիմունքով կիրառման համար շինարարական նորմերի (СН EAЭС) և նախագծման ու շինարարության համար կամավորության սկզբունքով կիրառման շինարարական կանոնների (СП EAЭС) մշակման նպատակով ներկայացված հեռանկարային ծրագրի վերաբերյալ:

3.9 Ասիական գարգացման բանկի փորձագետների կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա մշակվել է «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագրի շրջանակներում իրականացվող դպրոցական շենքերի ուժեղացման և նորի կառուցման համար Հայաստանի Հանրապետությունում գործող շինարարական նորմերով թույլատրելի առավել բարձր պահանջներ և պայմաններ կիրառելու մասին» հրամանի նախագիծը, որը հաստատվել է ՀՀ քաղաքաշինության նախարարի 2016 թվականի մարտի 24-ի N 49-Ն հրամանով և սահմանված կարգով պետական գրանցում է ստացել ՀՀ արդարադատության նախարարության կողմից:

3.10 Շենքերում էներգիայի կորուստների նվազեցման նպատակով մշակվել է «ՀՀՇՆ 24-01-2016 «Շենքերի ջերմային պաշտպանություն» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում լրացում կատարելու մասին» հրամանի նախագիծը, որը հաստատվել է ՀՀ քաղաքաշինության նախարարի 2016 թվականի հունիսի 16-ի N 120-Ն հրամանով և սահմանված կարգով պետական գրանցում է ստացել ՀՀ արդարադատության նախարարության կողմից:

3.11 Մշակվել են «Հայաստանի Հանրապետությունում շենքերի տեխնիկական վիճակի հետազննություններ» և «Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում» (տեղայնացում) ծրագրերի ՀՀ 2017-2019 թվականների ՄԺԾԾ-ի հայտերը, որոնց հաստատված չափաքանակների հիման վրա մշակվել են այդ ծրագրերի ՀՀ 2017 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը:

3.12 Կատարվել է թվով 30 միջպետական ստանդարտների փորձաքննություն:

Մասնակցություն է ցուցաբերվել.

- Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (ՃՄՀԳ) և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից «Հայաստանի Հանրապետությունում սողանքային աղետի կառավարում» ծրագրի իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 20-ի N 941-Ա հրամանով ստեղծված աշխատանքային խմբի աշխատանքներին,

- Համաշխարհային բանկի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմիկ վտանգի հավանականային գնահատմամբ նոր շրջանացման քարտեզի կազմման աշխատանքների քննարկումներին,

- «Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման» ծրագրի շրջանակներում ՄԱԶԾ-ԳԵՖ հայաստանյան գրասենյակի աջակցությամբ մշակվող մոդուլային դպրոցների նախագծային առաջադրանքի մշակման աշխատանքներին և նախագծային առաջարկների քննարկումներին,

- Շինարարության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման գործընթացներին աջակցություն ցուցաբերելու նպատակով կազմակերպվել են քննարկումներ:

4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄ

2016 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ քաղաքաշինության բնագավառում գործում են մոտ 2430 կազմակերպություն, որոնք ունեն թվով 2829 լիցենզիա և թվով 5168 ներդիրներ, այդ թվում՝

- շինարարության իրականացում՝ 1893 լիցենզիա՝ 3505 ներդիրներով,

- քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն՝ 592 լիցենզիա՝ 1139 ներդիրներով,

- շինարարության որակի տեխնիկական հսկողություն՝ 253 լիցենզիա՝ 524 ներդիրներով,

- ինժեներական հետազննություն՝ 50 լիցենզիա,

- շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն՝ 41 լիցենզիա:

2016 թվականի ընթացքում տրամադրվել են թվով 209 լիցենզիա և թվով 433 ներդիրներ, այդ թվում՝

- շինարարության իրականացում՝ թվով 150 լիցենզիա՝ 274 ներդիրներով,

- քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն՝ թվով 38 լիցենզիա՝ 99 ներդիրներով.

- շինարարության որակի տեխնիկական հսկողություն՝ թվով 19 լիցենզիա՝ 36 ներդիրներով,

- ինժեներական հետազննություն՝ թվով 1 լիցենզիա, թվով 14 լիցենզիային կից ներդիրներ,

- շենք-շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն՝ թվով 1 լիցենզիա, թվով 10 լիցենզիային կից ներդիրներ:

Վերաձևակերպվել են՝ թվով 14 լիցենզիա և թվով 23 ներդիրներ:

Փոխարինվել են՝ թվով 81 ներդիրներ:

Դադարեցվել են՝ թվով 91 լիցենզիա և թվով 162 ներդիրներ՝ լիցենզավորված անձանց դիմումի համաձայն:

Կրկնօրինակի տրամադրում՝ թվով 3 լիցենզիա և թվով 7 ներդիրներ:

2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական բյուջե մուտք է եղել 324.43 մլն. դրամ լիցենզիաների տարեկան պետական տուրք:

2016 թվականի ընթացքում շինարարության որակի տեխնիկական հսկողություն, շենքերի և շենք-շինությունների տեխնիկական վիճակի հետազննության հաշվետվությունները չներկայացնելու, որոշումներին չհամապատասխանեցնելու, ինչպես նաև հաշվետվությունները խեղաթյուրված կամ թերի ներկայացնելու պատճառով կասեցվել են թվով 54 կազմակերպությունների լիցենզիաները, որից 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կասեցված են թվով 16 կազմակերպությունների լիցենզիաներ:

Լիցենզիաների տարեկան պետական տուրքը չվճարելու պատճառով կասեցվել են թվով 822 լիցենզավորված անձանց թվով 13 լիցենզիա և թվով 1129 ներդիրներ:

5. ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺԻՆ

5.1 ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ անց է կացրել առանձնացված շտաբային մարզումներ,

5.2 մասնակցել է նախարարության քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում գործող պլանի համաձայն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից կազմակերպված բոլոր հրամանատարաշտաբային ուսումնավարժություններին ու հավաքներին, որոնց ամփոփման ժամանակ ստացել է դրական գնահատականներ և գրավոր շնորհակալագրեր,

5.3 իրականացվել է ՀՀ Սյունիքի մարզի, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատումը,

5.4 մասնակցել է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում անցկացվող «Երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը և կազմակերպումը» հրամանատարաշտաբային ուսումնավարժությանը,

5.5 համակարգել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում 2016 ուսումնական տարում ՀՀ քաղաքաշինության

նախարարության համակարգի ղեկավար աշխատողների և մասնագետների պատրաստման աշխատանքները,

5.6 մասնակցել է Երևան քաղաքի քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատմանը,

5.7 ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ անց է կացվել առանձնացված հրամանատարաշտաբային մարզում,

5.8 մշակել է ՀՀ ԿԱ Քաղաքաշինության պետական կոմիտեն խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման պլանը,

5.9 կազմել և ՀՀ ԱԻՆ համաձայնեցմանն է ներկայացվել կոմիտեի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներին առնչվող 2017 թվականի հիմնական միջոցառումների պլանը,

5.10 իրականացրել է գործառույթներ՝ սահմանված Հայաստանի Հանրապետությունում գաղտնիության ռեժիմն ապահովելու վերաբերյալ հրահանգով.

5.11 շահագործել է «Արաքս-3 PCI» հատուկ նշանակության աշխատատեղը:

6 ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի այլ գործառույթներ

6.1 ՀՀ կառավարություն է ներկայացվել ՀՀ և Վրաստանի Հանրապետության միջև քաղաքաշինության ոլորտում երկկողմ համագործակցության ուղղությունների առաջարկ, նաև ՀՀ և ՌԴ միջև տնտեսական համագործակցության հարցերով միջկառավարական հանձնաժողովի 16-րդ և 17-րդ նիստերի հուշագրերով նախատեսված կետերի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն: 2016 թվականի ապրիլի 7-ին կնքվել է Համաձայնագիր ՀՀ քաղաքաշինության նախարարության և ՌԴ քաղաքաշինության և բնակ-կոմունալ տնտեսության նախարարության միջև քաղաքաշինության, ճարտարապետության, շինարարության, բնակարանային քաղաքականության և բնակարանային կոմունալ տնտեսության բնագավառում:

6.2 ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն է ներկայացվել Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի 13-րդ նիստի հուշագրով նախատեսված կետերի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև ներկայացվել են քաղաքաշինության ոլորտում համագործակցության առաջարկություններ՝ 14-րդ նիստի փոխըմբռնման հուշագրում ընդգրկելու նպատակով:

6.3 Հայ-չեխական միջկառավարական հանձնաժողովի 2-րդ նիստի հուշագրով նախատեսված կետերի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև քաղաքաշինության ոլորտին առնչվող համագործակցության առաջարկությունները ներկայացվել են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն:

6.4 ՀՀ էկոնոմիկայի նախարարություն է ներկայացվել ԵԱՏՄ ծառայությունների միասնական շուկայի ձևավորման ազատականացման ծրագրի համար հստակ ժամկետների սահմանման վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև առաջարկություններ՝ տնտեսական համագործակցության հարցերով հայ-բելառուսական միջկառավարական հանձնաժողովի 12-րդ նիստի օրակարգի նախագծում ներառելու նպատակով: Բելառուսի Հանրապետության Ճարտարապետության և շինարարության նախարարություն է ներկայացվել համագործակցելու մասին համաձայնագրի նախագծի առաջարկ:

6.5 ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն է ներկայացվել հայ-իրաքյան միջկառավարական հանձնաժողովի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն: ՀՀ արտաքին գործերի նախարարություն է ներկայացվել (իրաքյան կողմին դիվանագիտական ուղիներով փոխանցելու համար) Իրաքի վերակառուցման գործընթացին մասնակցության ցանկություն հայտնած ընկերությունների անվանումների ցանկը:

6.6 2016 թվականի ընթացքում աշխատակազմի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվել է 11 մրցույթ:

6.7 Նախապատրաստվել և ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնեցմանն է ներկայացվել քաղաքացիական ծառայության 132 պաշտոնի անձնագրի նախագիծ, որոնք սահմանված կարգով հաստատվել են, իսկ 68 պաշտոնի անձնագրում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

6.8 Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել է քաղաքացիական ծառայողների վերապատրաստման և ատեստավորման կազմակերպման աշխատանքներ՝ 57 քաղաքացիական ծառայողներ վերապատրաստվել են, իսկ 22 քաղաքացիական ծառայողներ ատեստավորվել:

6.9 2016 թվականի ընթացքում քարտուղարությունում մուտքագրվել է 13741 գրություն, ելք է արվել 7045 գրություն:

6.10 Հաշվետու ժամանակահատվածում ձևակերպվել է նախարարի ստորագրած 222, աշխատակազմի ղեկավարի ստորագրած 201 հրաման:

6.11 Նախարարությունում քննարկվել է քաղաքացիների թվով 418 դիմում, որից 237-ը՝ բնակարանային, 71-ը՝ շինարարական, 27-ը՝ աշխատանքային, 8-ը՝ կենսաթոշակային, 10-ը՝ օրենսդրական և 65-ը՝ այլ բնույթի:

6.12 ՀՀ կառավարություն է ներկայացվել 62 որոշման նախագիծ, որից 39-ն ընդունվել է որպես ՀՀ կառավարության որոշում, 1-ը՝ արձանագրային որոշում, 16-ը՝ ՀՀ վարչապետի որոշում:

6.13 2016 թվականին կազմակերպվել և անցկացվել է Կոմիտեի նախագահի և տեղակալների, աշխատակազմի ղեկավարի, Կոմիտեի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների և այլ պաշտոնատար անձանց մամուլի ասուլիսներ, հարցազրույցներ, ճեպազրույցներ, նախարարության գործունեության ոլորտին առնչվող հասարակական հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ պատրաստվել են մամուլի հաղորդագրություններ:

6.14 Կազմակերպվել է Կոմիտեի գործունեության մասին հանրության իրազեկումը՝ մամուլի հաղորդագրությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, տեսա-ֆոտո նյութերի և այլ տեղեկատվական նյութեր պատրաստելու և տարածելու միջոցով:

6.15 Ամփոփվել է Կոմիտեի գործունեության ոլորտին առնչվող զանգվածային լրատվության միջոցների նյութերը, պատրաստվել է օրվա մամուլի տեսությունը, որը «mulberry» համակարգով ներկայացվել է Կոմիտեի աշխատակիցներին:

6.16 Համակարգվել է Կոմիտեի պաշտոնական կայքէջի տեղեկատվական սպասարկման աշխատանքները:

6.17 Կազմակերպվել է քաղաքացիների գրանցումը և ընդունելությունն աշխատակազմի պաշտոնատար անձանց մոտ և արդյունքների մասին տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ նախագահի և ՀՀ կառավարության աշխատակազմեր: